

## ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

### Ա. Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

Մարդկային հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքային գործունեությունն է, որի մեջ մեծ դեր ունի երկխոսությունը: Երկխոսությունն առաջացել է լեզվի ծագման շրջանից: Մարդկային հասարակության առաջացման արշալույսին մարդիկ, բնության ուժերի դեմ պայքարելիս և ապրուստի համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելիս, ստիպված էին համախմբվել: Համատեղ աշխատանքի ընթացքում առաջ է գալիս միմյանց ինչ-որ բան ասելու, հաղորդակցվելու պահանջ: Առանց երկխոսության անհնար է պատկերացնել մարդկային կյանքն ընդհանրապես:

Երկխոսությունը, որի պարզ ձևը զրույցն է, կայանում է, եթե դրան մասնակցում են երկու կամ ավելի մարդ: Երկխոսության համար անհրաժեշտ է նաև քննարկման առարկա, նյութ: Այստեղ կարևորվում է նաև լեզվական համակարգը, որից օգտվում է խոսողը՝ նրանից վերցնելով հաղորդման անհրաժեշտ լեզվական միավորներ՝ բառեր, քերականական տարբեր ձևեր, դարձվածքներ և այլն:

Մարդկային հաղորդակցման ժամանակ մեծ դեր է խաղում նաև մտածողությունը: Խոսելուց առաջ մարդը մտովի կազմում է ասելիքը և արտահայտում այն լեզվի միջոցով:

Լեզվաբանական գրականության մեջ երկխոսության կառուցվածքը ներկայացվում է հետևյալ սխեմայով. ա-ն ասաց, բ-ն ասաց, կամ ա-ն հարցրեց, բ-ն պատասխանեց<sup>1</sup>: Այստեղ ընդգծվում է խոսողի և խոսակցի մտքերի սերտ փոխհարաբերությունը, քերականական կապը: Խոսակիցն անմիջապես արձագանքում է իր զրուցակցի մտքին. օրինակ՝

— Ջուրը չի գալիս:

— Ջաղացը չի բանում, մեռնեն ճակատիդ, — ասաց ծերունին:

— Ինչի՞ չի բանում:

— Քարը փոխում ենք, — ասաց ծերունին:

— Գնա՞մ ջուրը բացեն:

— Քարը փոխենք՝ նոր:

— Որ ես բացեմ, չի՞ բանի, — հարցրեց Մխոն (ՀՄ):

Երկխոսության սխեմային կարելի է ավելացնել նաև երրորդ կառույցը. ա-ն հարցրեց, բ-ն երարցրեց: «Հարցին հարցով տրված պատասխանը կոչվում է լրացահարցական նախադասություն»<sup>2</sup>: Այստեղ բ-ի խոսքը կառուցվում է հարցական նախադասության ձևով: Հարցնողը հարցը կարող է տալ ոչ միայն խոսակցին, այլև իրեն: Առաջին դեպքում հարցական նախադասությունը կոչվում է երկխոսական, իսկ մյուս դեպքում՝ մենախոսական<sup>3</sup>: Մենախոսական հարցական նախադասություններն ավելի շատ գործածվում են գեղարվեստական խոսքում.

«Էս աշխարհի մեջ դո՞ւ ում կողմեն կընդունվիս, Չորի Միրո», — ինքն իրեն հարց տվեց և տվեց պատասխան.

«Հարութի» (ՄԳ):

Երկխոսության մեջ իր որոշակի տեղն ունի հարցումը: Հարցական հնչերանգը երկխոսու-

<sup>1</sup> Տե՛ս Ֆ. Խրդաթյան, Դ. Դեմիրճյանի «Կարդամանք» պատմավեպի լեզուն և ոճը, Երևան, 1988, էջ 165:

<sup>2</sup> Մ. Արթուրյան, Վ. Առաքելյան, Վ. Քասյան, Հայոց լեզու, 2-րդ մաս, շարահյուսություն, Երևան, 1975, էջ 119:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

թյան առավել բնորոշ հատկանիշն է: Ընդ որում, այդ հնչեբանգը ոչ թե ամբողջական նախադասության, այլ նրա որևէ բառին կամ մի քանի բառերին է վերաբերում: Հարցում կարող է առաջանալ ոչ հարցական<sup>4</sup> պատմողական կամ հորդորական խոսքերից, նախօրոք տրված որևէ հարցումից: Սակայն հարցումը կարող է լինել հաղորդակցման սկիզբ և անմիջապես պատասխան հայցել:

Մ. Ղուկասյանը ընդգծում է, որ հաճախ խոսողը ճարտասանական հարցման միջոցով դիմացինից ոչ թե պատասխան է պահանջում, այլ նրան մղում է որևէ գործողության՝ «Գրիչը մեկ ընկալելու չե՞ս տա», «Մի քիչ այն կողմ չե՞ս մատի»<sup>5</sup>: Այս դեպքում արդեն հարցական նախադասությունները արտահայտում են հորդորականի իմաստ:

Հայտնի է հարցումների երկու մեծ խումբ.

ա) հարցական բառով հարցում

բ) առանց հարցական բառի հարցում:

Երկխոսություններում հարցումները հիմնականում ձևավորվում են հարցական դերանունների (ո՞վ, ի՞նչ, ինչպիսի՞, ինչքա՞ն, ինչո՞ւ, ո՞ր, որտե՞ղ, ե՞րբ, քանի՞, քանի՞սը և այլն) և հարցական եղանականիշ բառերի (մի՞թե, արդյո՞ք, չի՞նի՞ թե, չե՞ որ) միջոցով: Հարցական դերանուններն ունեն յուրատեսակ տեքստակազմիչ նշանակություն<sup>5</sup>: Այս դերանունները զգալի չափով նպաստում են խոսքը կոնկրետ դարձնելուն և այն ավելորդ բառերից բեռնաթափելուն: Այս երևույթը առավել ցայտուն զգացվում է երկխոսություններում: Հարցական դերանուններն օգտագործվում են նախադասության սկզբում, բայց երբեմն կարող են օգտագործվել նախադասության միջնամասում, վերջնամասում:

— Այսօր ի՞նչ օր է (ՎՊ):

— Ինչպե՞ս է տիկին Սաթենիկը, զավակներդ ինչպե՞ս են,— մտելով ու իր դիմացը աթոռ ցույց տալով Մխիթարին՝ հարցրեց Դավիթ Բեկը (ՄԽ):

Այսպիսով՝ հարցական նախադասությունը ձևավորվում և արտահայտվում է հարցական հնչեբանգով: Վերջինս լինում է երեք տեսակ՝ բարձրացող, իջնող և բարձրացող-իջնող<sup>6</sup>: Հայտնի է, որ հարցական նախադասության մեջ ամենաբարձր հնչեբանգով արտահայտվող բառը իր վրա կրում է նախադասության տրամաբանական շեշտը: Եթե այդ բառը նախադասության վերջում է գտնվում, հնչեբանգը բարձրացող է. օր.՝ Իսկ եթե պրիստավը զա՞ (ՍՁ):

Հարցական նախադասության հնչեբանգը իջնող է, եթե տրամաբանական շեշտը իր վրա է կրում առաջին բառը. օր.՝ Ի՞նչ է անում Մարթան (ՎՏ):

Իսկ եթե տրամաբանական շեշտ ունեցող բառը շարադասված է նախադասության միջնամասում, հնչեբանգը բարձրացող-իջնող է. օր.՝ Ամռանն ո՞ր եք մտադիր գնալ:

Երկխոսության մեջ՝ պատասխան խոսքում, հաճախ են գործածվում բառ-նախադասություններ<sup>7</sup>, որոնք դրական կամ բացասական պատասխան են տալիս կամ էլ որոշակի վերաբերմունք են արտահայտում<sup>8</sup>: Բառ-նախադասություններն արտահայտում են այդ (հա), ոչ (չէ) հաստատական և ժխտական եղանակավորիչներով, ինչպես նաև համաձայնություն արտահայտող եղանակիչներով, ինչպես՝ իհարկե, անշուշտ, անկասկած, հարկավ, ինչպես չէ և այլն:

«— Դուք մեր կուրսո՞ւմ եք սովորում:

— Այո» (ՇԹ):

«— Թույլ կտա՞ս բանտապետ:

— Անշուշտ, անշուշտ» (ՊՁ):

Երբեմն խոսողը կարող է իր միտքը մի քանի նախադասությամբ արտահայտել, իսկ պատասխան խոսքի բառ-նախադասությունը զրուցակցի վերջին նախադասության պատասխանը լինել:

<sup>4</sup> Մ. Ղուկասյան, Ժամանակակից հայերենի հարցատեսակները, «Լեզվի և ոճի հարցեր», Երևան, 1978, հ. 5, էջ 104:

<sup>5</sup> Տե՛ս Ռ. Մկրտչյան, Ժամանակակից հայերենի ձևարանական ոճաբանություն, Երևան, 1992, էջ 211:

<sup>6</sup> Տե՛ս Մ. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Ջալալյան, նշվ. աշխ., էջ 120:

<sup>7</sup> Բառ-նախադասությունը կարող է գործածվել մեծախոսության մեջ՝ հաստատելու կամ ժխտելու այս կամ այն միտքը: Օր.՝ Ահա թե ինչ է պակասում նրան: Կոչում: Այո (ԺԱ):

<sup>8</sup> Տե՛ս Մ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981, էջ 329:

«— Ես չեմ հասկանում, թե ինչու եք ինձ կանչել: Ասացիք՝ իմ կարծիքն էր հետաքրքրում:

— Իհարկե» (ՎՊ):

Այստեղ «իհարկե» բառ-նախադասությունը խոսողի առաջին նախադասության պատասխանը չէ: Այն տրամաբանորեն կապվում է երկրորդ նախադասության հետ:

Ջեղչումը ընդհանուր լեզվական երևույթ է, խոսքի համառոտության միջոց: Երկխոսության կառուցվածքում կարող են զեղչվել նախադասության որոշ հատվածներ<sup>9</sup>:

Ջեղչումը երկխոսության մեջ հաճախ այնպիսի չափեր է ունենում, որ նախադասությունը կորցնում է իր կառուցվածքային բնույթը.

«— Բայց կատարե՞ց իր պարտքը համդեպ հայրենիքի:

— Ինչպես ամեն հայ» (ԴԴ):

Երկխոսության մեջ կարող է զեղչվել ստորադասական նախադասության գլխավոր նախադասությունը.

«— Հապա ինչո՞ւ ես այդպիսի սիրով կառուցում քձնամուտ քաղաքը:

— Որովհետև ես հիմա անսահման ժամանակ և հնարավորություն ունեմ իմ փայփայած երազանքով զբաղվելու» (ՊՁ):

Քերականական զեղչում կա նաև հետևյալ երկխոսության մեջ.

«— Արտասահմա՞ն ես գնալու:

— ... Ենք գնալու»:

Համատեքստից դուրս այս երկխոսությունը կարելի է երկու կերպ ընկալել. կամ խոսակիցը նկատի ունի, որ ինքը մեծակ չի գնալու արտասահման, նրա հետ կան այլ մարդիկ, կամ էլ խոսակիցը նկատի ունի իր գրուցակցին:

Երկխոսության մեջ հաճախ կարևորվում է դիպուկ պատասխանը: Այս դեպքում դիմացինի ողջ փաստարկումը կորցնում է իր ուժը: Բերենք մի օրինակ 11-րդ դարի մեծ մտածող Գրիգոր Մագիստրոս Պահլավունուց.

«Արտույտը վախենալով, որ երկինքը փուլ կգա, պառկեց մեջքի վրա, ոտքերը վեր տնկեց և աշխատեց դեմ տալ երկնքին: Տեսնողները ծիծաղեցին նրա վրա և ասին.

— Այ խելքի ծով ճնճողուկ, դու ո՞նց կարող ես քո ծղոտն ծնկներով պահել երկինքը:

Եվ թռչունը պատասխանեց.

— Ես իմ բաժին երկինքն եմ պահում»:

Այս պատասխանը դիպուկ է, իմաստուն և արժանապատիվ:

Հանդիմանության պահերին խոսակիցը կարող է ընդհատել խոսողին և թույլ չտալ, որ նա իր խոսքն ավարտի.

«— Տիկին,— ուզեց արդարանալ Պատրիկանը, բայց տիկինը ավելի ևս կոպտությամբ կլտրեց նրա խոսքը.

— Լսել անգամ չեմ ուզում» (Ե):

Երբեմն հարցատուին կարող է պատասխանել ոչ թե խոսակիցը, այլ մի երրորդ անձ, որը մերկա է խոսակցությանը.

«Անկյունում» մինդարի վրա, ծալապատիկ նստել էր անդամալույծը և գլուխը ծնկան վրա կախած՝ աչքերն էր սրբում:

Հաճի մարը ծովեց նրա գլխին.

— Մրբո՞ւն, քո՞ւրս, ինչի գուլաս:

Անդամալույծը չպատասխանեց:

Ընավունի տղան, ութ տարեկան Կարոն, որ ներս էր եկել և հետևում էր սրանց խոսակցությանը, բացատրեց.

— Թուրքերեն կվախենա:

Տիրեց լռություն» (ԴԴ):

Պատասխան խոսքի մի մասը կարող է խոսակցի պատասխանը լինել, մի մասը՝ խոսողի խոհերը.

«— Իմ սիրտ կվկայեր, որ տարին չար է,— կրկնեց Արոն,— գաբուն չկամ էկավ: Փորձած է՝ կառորածի տարին մնամապես գաբուն չկամ էր:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 312:

— Հա, Արո, ճշմարիտ է, քու խոսք ճշմարիտ է,— ծանր-ծանր ասաց Չորի Միրոն,— կոտորածի տարին գարուն ուշ բացվալ... կոտորածի գարնան նմանապես զերմանացու մասին մեր էրգրի մեջ խոսք ու գրույց շատ կար,— ցածրացրեց ձայնը՝ կեսը պատասխան էր Արոյին, կեսը՝ մտածմունք...» (ՄԳ):

Երկխոսության մեջ խոսակիցը կարող է կրկնել իր զրուցակցի մի բառը, բառակապակցությունը, ամբողջ միտքը: Դա ավելի շատ երևում է դրամատիկական ստեղծագործություններում: Ֆեդերիկո Գարսիա Լորկայի «Արյունոտ հարսանիք» ողբերգության մեջ հարսնացուն, կրկնելով փեսացուի ընդմիջարկումից մի հատված, հաստատում է իր սիրելիի միտքը.

«Փեսացու— Ոչ մի հարսանիքի այսքան ժողովուրդ չի հավաքվել:

Հարսնացու— Ոչ մի»:

Հարսնացուն փեսացուի խոսքին կարող էր այլ բառերով արձագանքել՝ իհարկե նույն միտքն արտահայտելով: Մակայն ոչ մի ընդմիջարկումը ավելի է ընդգծում նրա պատասխանը:

Խոսակիցը կարող է կրկնել իր զրուցակցի նախադասության ստորոգյալը՝ արտահայտելով անհամաձայնություն.

«Մայր— Երբ ես մեռեմ, ծախսք իմ խաղողի այգին և ինչ-որ տեղ մոտակայքում նորը գնեք:

Հայր— Ծախսք, ծախսք... Գնել է պետք և ոչ ծախել...»:

Կարող է կրկնվել խոսողի արտահայտած մի ամբողջ նախադասություն.

«Ջոնիի հայրը— Անշուշտ, ես կարող եմ ազատել, երբ կամենաք: Նրանք կահ-կարասի ունեն»:

Քանինզը— (Աղքատ ընտանիքին դառնալով) Կահ-կարասի ունե՞ք:

Ամուսինը— Ոչ» (ՎՍ):

Այս երկխոսության մեջ կրկնվող նախադասությունը պահպանում է իր հնչերանգային տիպը: Կան դեպքեր, երբ կրկնվող մտքի հնչերանգը փոխվում է: Մեջբերվող հատվածում կրկնվում է **Ի՞նչ երազանք** ընդմիջարկումը: Քիթի խոսքը զարմանք է արտահայտում: Իսկ Ջոյի **ինչ երազանք** կրկնվող խոսքում զգացվում է անհամաձայնություն: Այստեղ բառերը նույնն են, միայն վերաբերմունքն է փոխվում.

«Ջո— (Ասես վախենալով, քե նրա երազը կցնդի-կանճեանա) Ի՞նչ է հիմա ձեր երազանքը:

Քիթի— (Էլ ավելի մոտենալով) Ի՞նչ երազանք:

Ջո— Ինչ երազանք: Հենց նոր երազում էիք, չէ՞» (ՎՍ):

Երկխոսությունը կարող է մնալ նաև անպատասխան. ա-ն ասաց (հարցրեց), բ-ն լռեց:

«— Հայրի՛կ,— աղջկա ձայնը զրնգում էր, բայց հայրը չպատասխանեց»:

Լոռությունը կարող է լինել. ա) համաձայնության նշան, բ) անհամաձայնության նշան, գ) չլողմնորոշվելու նշան: Կարող է խոսակիցը չպատասխանել, որովհետև ինքն այդ պահին տարված է այլ մտքերով: Հնարավոր է, որ խոսակիցը պարզապես չցանկանա պատասխանել իր զրուցակցին: Գեղարվեստական գրականության մեջ կան բացառիկ օրինակներ, երբ խոսակիցը լռում է, չի պատասխանում, որովհետև նա այդ պահին մահացած է.

«Ջոնիի հայրը— Ներս համեցեք, խնդրեմ: (Կարմայքը մոտենում է Մեք-Գրեգորին): Պարոն Մեք-Գրեգոր: (Պատասխան չկա: Բարձրաձայն): Պարոն Մեք-Գրեգոր: (Ավելի մոտ գալով): Պարոն Մեք-Գրեգոր: Պարոն Մեք...»

Կարմայքը դիմում է դեպի Մեք-Գրեգորը և զննում է նրան:

Կարմայք— Մեռած է» (ՎՍ):

Խոսակիցը կարող է խոսողին միայն ժեստով պատասխանել՝ ձեռքի և գլխի շարժումներով: Այս դեպքում հարցը առաջարկվում է, իսկ պատասխանը տրվում է անձայն՝ դիմախաղի կամ ձեռքի շարժումների միջոցով.

«Նա շարունակեց անց ու դարձ անել:

— Թող մեղավորն ուտի իր սիրտը, դու ի՞նչ մեղք ունիս,— խոսեց դարձյալ Սոնան:

— Ո՞վ է մեղավորը:

— Կնիկը, ինչո՞ւ նրան չես պատժում:

Մի դառն հեզմական ժպիտ սահեց Մուրադի դեմքով: Նա **ասերը բռավեց, գլխը երերեց:** Ասելն էր. ինչպե՞ս պատժեմ քեզ, խեղճ էակ, քանի որ Աստված ինքն է պատժել: Սոնան գուշակեց այս լուռ պատասխանի իմաստը» (Ը):

Երկխոսություններում սովորաբար ուրիշի ուղղակի խոսքն ընդմիջվում է ասացական բայե-

րով, որոնք իրար են կապում ուրիշի և հեղինակային խոսքերը: Հաճախ ասացական բայերն ունենում են գնահատիչ երանգ: Գրողը ներկայացնում է, թե ով է խոսողը և ցույց է տալիս, թե ինչպես է ասում.

«— Երեմիա, ինձ այնպես է թվում, թե վաղը վճռվելու է Հայոց Աշխարհի բախտը,— ասում էր Պապը:— Կամ ապրենք պիտի, կամ մեռնենք...

— Կապրենք,— ասաց Երեմիան հանգիստ:— Առաջին անգամը չէ, Պապ, որ Հայոց Աշխարհը ելնում է կովի: Եթե ելնում է, ուրեմն և ունի ապրելու կամք: Կովով է ապրում աշխարհում ամեն արարած» (ԱՁ):

Խոսքային հաղորդակցման ժամանակ խոսողը կամ գրողը կարող են դիմել որևէ անձի կամ առարկայի, որի անունը հանդես է գալիս կոչականի շարահյուսական պաշտոնով: Կոչականի հիմնական գործառնությունը հաղորդման վրա խոսակցի ուշադրության հրավիրումն է<sup>10</sup>: Կոչականի ոճական դրևադրման շրջանակները բազմազան են: Այն լայն գործածություն ունի գեղարվեստական, առօրյա-խոսակցական, վարչագործառական ոճերում: Կոչականներն առատությամբ են գործածվում նամակագրությունում: Նամակը գրություն է խոսակցին որևէ բան հաղորդելու համար.

«Իսկապես, Մարթա՛, դուք պետք է այդ քացիկը ավելի շուտ գրեիք» (Վ. Տերյանի նամակներից):

Գեղարվեստական և առօրյա-խոսակցական ոճերում խոսողը կամ գրողը կարող են իրենց դիմել որպես խոսակցի.

«Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ,

Ծերանում ենք, սիրելի՛ս...» (ՊՍ):

Կոչականը գրեթե հող չի ստանում, շեշտվում է և տրոհվում<sup>11</sup>: Կոչականը նախադասություն կազմող մյուս միավորներից անջատվում է ստորակետերով: Ըստ կազմության կոչականները լինում են միանդամ և բազմանդամ: Երկխոսություններում գործածվում են և՛ միանդամ, և՛ բազմանդամ կոչականներ:

«— Արամ՛, ես քեզ չեմ հասկանում, ախր դու դեռ բուլբուլին երեխա ես, ո՞ր կարող ես գնալ մեռակ...

— Մի՛ տխրիր, մայրիկ, չեմ կորչի, աշխարհում լավ մարդիկ շատ կան» (ՎՊ):

Երբեմն միևնույն խոսքում կարող է մի քանի անգամ կրկնվել կոչականը: Կոչականի կրկնությունը ոճական հնարանք է, այստեղ խոսողը զրուցակցի ուշադրությունը քնեռում է կարևոր ասելիքին.

«— Մարիամ՛, — ասաց Անդոն, — Մարիամ՛, կովն ինչի՞դ է պետք, ինչո՞ւ ես կով պահում, Մարիամ: Ծախիր, գնա աղջկադ հետ փեսիդ տանն ապիր, ինչո՞ւ ես քեզ չարչարում, Մարիամ: Քանի անգամ ես ապրելու, հիմար: Քո ինչ բանն է կով պահելը, էլ չալակով խոտ չբերես, քեզ մի՛ սպանիր, Մարիամ» (ՀՄ):

Բազմանդամ կոչականը ազատ բառակապակցություն է, որի գերադաս անդամը ունի իրեն լրացնող անդամներ: Բազմանդամ կոչականներով շատ հարուստ է մեր քնարերգությունը.

«Հրա՛ջ աղջիկ, գիշերների՛ թագուհի,

Ճառագայթող քո աչքերով դու եկար...» (ՎՏ):

Այսպիսով՝ երկխոսություններում կոչականը կարևոր տարր է (հիարկե, ոչ պարտադիր): Կոչականի առկայությունը ինքնին մեկին ուղղված խոսք է մատնանշում: Երկխոսության մեջ առաջնային է բայաձևերի և անձնական դերանունների 2-րդ դեմքի գործածությունը: 2-րդ դեմքը երկխոսության էական կառուցվածքային տարրերից է:

Երկխոսության կառուցվածքում առանձնացվում է նաև դիմելի: Մտերմիկ, քարեկամական գրույցի դիմելիձևը, անշուշտ, տարբերվում է պաշտոնական դիմելիձևից:

Սովորաբար երկխոսությունը կազմված է լինում հեղինակային և ուղղակի մեջբերվող խոսքերից կամ միայն ուղղակի մեջբերվող խոսքից: Հեղինակային և ուղղակի մեջբերվող խոսքերը ունեն ազատ շարահյուսություն և հնչերանգ: Ուղղակի մեջբերվող նախադասության շարահյուսությունը որոշվում է հեղինակային խոսքի նկատմամբ ունեցած դիրքով<sup>12</sup>: Այն կարող է լինել.

<sup>10</sup> Գ. Ջախուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 371:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 368:

<sup>12</sup> Տե՛ս Մ. Արթուրյան, Ժամանակակից գրական հայերեն, էջ 403:

ա) հետադաս.

«Այդ մի կաթիլը կես շունչ և կես կյանք տվավ Քաջիկին, և նա կանչեց.

— Քիչ է՛լ, քիչ է՛լ...» (ՂԱ):

բ) նախադաս.

«— Ի՞նչ, դու գնո՞ւմ ես,— հարցրեց քարտուղարը՝ գլուխը բարձրացնելով և նայելով նրան սկզբից ակնոցի միջից» (Ե):

գ) միջադաս: Այս դեպքում մեջքերվող ուղղակի խոսքը երկու կողմից առնվում է հեղինակային խոսքի մեջ: Գեղարվեստական արձակում միջադաս մեջքերվող նախադասությունը սակավադեպ գործածություն ունի. «Իսկ նա նայեց ինձ, արհամարհանքով ծիծաղեց, նայեց հոգնած հայացքից և գոռոզաբար ասաց.

«Ես քեզ չեմ հասկանում, որովհետև դու ինքդ քեզ չես հասկանում. ինչե՞ր ես ասում ինձ. ես արհամարհում եմ քեզ»,— այդպես ասաց նա ինձ և կոխելով քացած սիրտս՝ հեռացավ» (ԱԻ):

դ) մի մասով նախադաս, մյուս մասով հետադաս.

«— Հեռվից ես սկսել,— կանգնելով նստած տեղը՝ նրան ընդհատեց Ռուբենը,— դու այն աստեղնե՞ր հեկտարից քանի՞ ցեմտներ քերք ենք ստացել» (ՄԽ):

Երկխոսություններում ուղղակի մեջքերվող նախադասությունը հեղինակային խոսքից անջատվում է սկզբից անջատման գծով, իսկ միջադաս և վերջադաս հեղինակային խոսքից հետո՝ ստորակետ գծով:

Գեղարվեստական խոսքի մեջ երբեմն հեղինակային խոսքը հաջորդող ուղղակի մեջքերվող խոսքից կարող է բաժանվել նաև միջակետ գծով և վերջակետ գծով:

«— Հե՛յ, Կարո՛, Կարո՛,— որսկանը գոռաց.

Միրահարները մնացին սառած.—

Էդպե՞ս ես պատվում հին աղ ու հացը» (ՎՄ):

Այս դեպքում հեղինակային խոսքին նախորդող և հաջորդող նախադասությունները լրիվ անկախ չեն, բայց ունեն զգալի ինքնուրույնություն<sup>13</sup>:

Երկխոսություններում կոչականի վրա, իսկ եթե նախադաս լրացումներ ունի, սովորաբար նրան նախորդող բառի վրա (բացի դերանունից) դրվում է շեշտ.

«— Միքայել՛,— կանչեց հայրը,— ապա այստեղ բեր պատրաստածդ մոդելը:

— Չեմ բերում,— ասաց որդին» (ԶԽ):

Անջատման գիծը լայն կիրառություն ունի դրամատիկական ստեղծագործությունների երկխոսություններում: Այն դրվում է խոսողի անվան և նրա խոսքի միջև.

«Բագրատ— Երեկ դու այդպես չէիր խոսում:

Անդրեաս— Երեկը երեկ էր, այսօրը՝ այսօր» (Ը):

Շատ հակիրճ, առավելապես մեկ բառով արտահայտված մեջքերվող ուղղակի խոսքից առաջ (երբ այն գրվում է առանց չակերտների) դրվում է քուք.

Շարմաղ բիբին ձեռքը կրծքին խփեց և աղիողորմ ասաց՝ ջա՛ն...:

Երկխոսության մեջ կարող են գործածվել կախման կետեր, որոնք դրվում են այն դեպքում, երբ խոսողի ասելիքը լրիվ չի արտահայտվում և նա ուզում է հատկապես նշել չլրսև որված հույզ, զգացմունք: Կախման կետերը կարող են դրվել նախադասության վերջում, մեջտեղում, սկզբում.

«Իշխանուհին դեմքը դարձրեց դեպի նա:

— Վիրավորե՞լ... ի՞նչ բանով...

— Ես ի՞նչ գիտեմ... Ո՞վ գիտե... գուցե... շատ կարելի է, մենք քեզ մի որևիցե բանով անզիտակցաբար վիրավորել ենք...» (Ե):

Երկխոսությունը կարող է կազմված լինել միայն հարցուպատասխանական նախադասություններից, որոնք համոզես են գալիս նոր տողից անջատման գծիկով: Այստեղ բացակայում է հեղինակային խոսքը.

«— Ես Թուրինջի տղան եմ:

— Քանի՞ եղբայր եք:

— Յոթ և մի քույր: Ես եղբայրներիցս փոքրն եմ:

— Ինչո՞վ ես պարապում:

— Որս եմ անում: Իմ եղբայրները քույրն էլ որսկան եմ» (ՄԽ):

<sup>13</sup> Տե՛ս Մ. Աբրահամյան, Հայոց լեզվի կետադրություն, Երևան, 1992, էջ 36:

Հարցուպատասխանական խոսքը բնորոշ է կառուցվածքային և հնչերանգային ուրույն գծերով:

Մտքի խոսքը գրվում է չակերտներում և հեղինակային խոսքից բաժանվում է ստորակետ գծով.

«Վարդիշաղը մարդու է գնացել»,— կրկնում է Դավիթը մտքում՝ գետի ջրերին նայելով (ՄԶ): Մակայն մտածմունքը կարող է բարձրաձայն հնչել: Այդ դեպքում օգտագործվում է ուղղակի խոսքի կետադրությունը.

«Չորի Միրոն շփեց ճակատը.

— Ի՞նչ դնիմ տղի անուն,— մտածեց բարձրաձայն» (ՄԳ):

Ամփոփելով ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ երկխոսությունը մտքերի մատուցման եղանակ է և ունի ինքնատիպ կառուցվածք: Երկխոսության կառուցվածքում իր որոշակի տեղն ունի հարցումը: Հարցական հնչերանգը երկխոսության առավել բնորոշ հատկանիշն է: Երկխոսության մեջ հաճախ կարևորվում է դիպուկ պատասխանը: Երկխոսության կառուցվածքում կարող են գեղչվել նախադասության որոշ հատվածներ: Հանդիմանության պահերին խոսակիցը կարող է ընդհատել խոսողին և թույլ չտալ, որ նա իր խոսքն ավարտի: Խոսակիցը կարող է խոսողին միայն ծեստերով պատասխանել: Երկխոսության կառուցվածքային հատկանիշներից են բայաձևերի, անձնական դերանունների 2-րդ դեմքի գործածությունը և դիմելաձևը: Երկխոսությանը բնորոշ է հատուկ հնչերանգ և կետադրություն:

### ՀԱՄԱՈՍՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՂԱ— Ղազարոս Աղայան	ՍԽ— Սերո Խանգաղյան
ԺԱ— Ժիրայր Ավետիսյան	ՀՄ— Հրանտ Մաքևոսյան
ՄԳ— Մուշեղ Գալշոյան	ՎՄ— Վահան Միրաբյան
ԴԴ— Դերենիկ Դեմիրճյան	Ն— Նար-Դոս
ՊԶ— Պերճ Ձեյթունցյան	Ը— Ըիրվանզադե
ՍԶ— Ստեփան Չորյան	ՎՊ— Վարդգես Պետրոսյան
ՇԹ— Շահեն Թաթևիկյան	ՎՍ— Վիլյամ Մարոյան
ԱԻ— Ավետիք Իսահակյան	ՊԱ— Պարույր Սևակ
ԶԽ— Չորայր Խալափյան	ՎՏ— Վահան Տերյան

**А. В. Галстян - Конструкция диалога.** - Основным средством общения между людьми является речевая деятельность, в которой диалог играет большую роль и имеет огромный вес. В лингвистической литературе конструкция диалога представляется следующей схемой: а сказал, б сказал, или а спросил, б ответил. К схеме диалога можно добавить также третью конструкцию: а спросил, б спросил. Но диалог может быть также безответным (а сказал, б не ответил).

В диалоге определенное место занимает вопрос. Вопросительная интонация является наиболее типичной в диалоге. В диалоге могут быть опущены члены предложения до такой степени, что диалог может потерять свою первоначальную конструкцию.

В диалоге чаще всего главную роль играет точный ответ. Во время спора участник диалога может прервать другого участника и не допустить, чтобы тот закончил свою мысль. Иногда задающему вопрос может ответить не участник беседы диалога, а какое-то третье лицо, которое участвует в разговоре. В диалоге участник может повторить одно слово, словосочетание или весь смысл сказанного другим участником. Бывают случаи изменения интонации повторяющихся предложений. Здесь слова одни и те же, меняется только смысл. Участник диалога может ответить соучастнику при помощи жеста.

При словесном общении говорящий может обратиться к какому-либо предмету, имя которого выступает в роли побуждения.

В художественном и обыденно-разговорном стилях говорящий, или писатель, могут обратиться сами к себе, как к соучастнику. В диалоге главное место занимает употребление глаголов второго лица и личных местоимений. В конструкции диалога немаловажную роль играют вид обращения и знаки препинания.